Արձանագրություն N 3

ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՃՈ 2023/Գ/ԷԼՌԵԳ ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի նիստի

ք.Երևան **06.02.2023**

ՀՀ ոստիկանության կարիքների համար 1-ին չափաբաժին- Գործարքների իրականացման համակարգչային ծրագրային փաթեթներ - ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված **ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՃՈ 2023/Գ/ԷԼՌԵԳ** ծածկագրով ընթացակարգի նիստում արձանագրվեց՝

ՀՀ Գնումների կազմակերպման մասին 526-Ն որոշման 41-րդ կետի համաձայն՝

41. Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում **իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ**՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը **մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը**, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Գնահատող հանձնաժողովի կողմից գնահատված **Վեբէքս Թեքնոլոջիս ՍՊԸ**-ի ներկայացված հայտում առկա են անահամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ՝ այն է ներկայացված չեն հրավերով պահանջված և տեխնիկական բնութագրով սահմանված փաստաթղթերը, որպես պարտադիր պահանջ՝

1. Մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա դրությամբ ունենա առնվազն 5 տարվա փորձ էլեկտրոնային կառավարման համակարգերի մշակման, ներդրման և սպասարկման բնագավառում:
2. Մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն երկու պայմանագիր:
3. Որակի և տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգերի համապատասխանության հավաստագրեր՝ համաձայն ISO 9001:2015 և ISO/IEC 27001:2013 միջազգային ստանդարտների՝ ծրագրային ապահովման մշակման և SS խորհրդատվության ոլորտներում

Վեբէքս Թեքնոլոջիս ՍՊԸ-ին տրվում է 1 աշխատանքային օր՝ նշված անհամապատասխանությունները շտկելու համար:

Վեբէքս Թեքնոլոջիս ՍՊԸ-ն կատարել է համապատասխան շտկումը, գնահատող հանձնաժողովի կողմից հայտը գնահատվել է բավարար:

Վեբէքս Թեքնոլոջիս ՍՊԸ-ն ճանաչվում է ընտրված մասնակից:

Վերը նշված ընտրված մասնակցի հետ կկնքվի համապատասխան պայմանագիր անգործության /10 օր/ ավարտից հետո:

Հանձնաժողով

ՀՀ ոստիկանության Կ և ՏՏՎ տեղեկատվական համակարգերի սպասարկման բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Ա. Թամազյան
(հանձնաժողովի նախագահ),

ՀՀ ոստիկանության ՃՈ ԾԱՏՍ բաժնի տեսուչ,
ոստիկանության մայոր Հ. Աբրահամյան,

ՀՀ ոստիկանության ՀՔ ՏՄՏՓ բաժնի աշխատակից ՀԿՀ ավագ տեսուչ, ոստիկանության փոխգնդապետ Գ.Վարդանյան,

ՀՀ ոստիկանության տնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի ավագ տեսուչ, ոստիկանության կապիտան Կ. Մաշկովսկայա
(հանձնաժողովի քարտուղար):